

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 28/9

ք.Երևան

25 մայիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով վճարված կանխավճարի գումարը հետ վերադարձնելու վերաբերյալ «ՄԵԽ-ՆՈՐՈԳՈՒՄ» ՍՊԸ դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

01.01.2018թ. «ՄԵԽ-ՆՈՐՈԳՈՒՄ» ՍՊԸ-ն դադարեցրել է գործունեությունը, սակայն գործունեությունն անորոշ ժամկետով դադարեցնելու մասին հայտարարությունը ներկայացրել է հունվարի 10-ին, որի արդյունքում 2018թ. առաջին եռամսյակի համար հարկային մարմնի կողմից հաշվարկվել է կանխավճարի գծով պարտավորություն՝ գումարով 8.734.000 դրամ:

ՀՀ հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե բացակայում է հարկային մարմնի կողմից բողոքարկվող անհատական իրավական ակտի, գործողության կամ անգործության դեպքը:

Քննարկվող դեպքում դիմում-բողոքը վերաբերում է 2018թ. առաջին եռամսյակի համար հարկային մարմնի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված կանխավճարի գծով պարտավորությունը հետ վերադարձնելուն, որը պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության դեմ բողոք չի հանդիսանում: Այսինքն, բացակայում է հարկային մարմնի կողմից բողոքարկվող անհատական իրավական ակտի, գործողության կամ անգործության դեպքը, ինչն ընդունեց նաև բողոքաբերը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

«ՄԵԽ-ՆՈՐՈԳՈՒՄ» ՍՊԸ դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Դ.ԱՆԱՆՅԱՆ